ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 163-Ա **22 մարտի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2530-Ա հրամանը

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2024 թվականին իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառներն ու իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության գործընթացն իրականացնելիս ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03-Ն հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարով.

2) անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների.

3) մասնագիտական հսկողություն իրականացնելիս, անհրաժեշտության դեպքում, աշխատանքային խմբում ներգրավել մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները:

22.03.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝
ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ.

Ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի մարտի 22 - ի
N 163-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԸ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

h/h	Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառ	Աշխատանքային խմբի ղեկավար և անդամներ
1	Խմբի ղեկավար	**Հարությունյան Վանիկ** մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ
2	Խմբի ղեկավարի տեղակալ	**Օհանյան Հրանդիկ** մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ
3	Համայնքի ավագանու լիազորություններ	**Հովհաննիսյան Բուրմունք** մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պարտականությունները կատարող
4	Համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորություններ	**Օհանյան Հրանդիկ** մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ
5	Համայնքի ղեկավարի լիազորությունները ֆինանսների բնագավառում	**Սարգսյան Նելսոն** մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ

6	Համայնքի ղեկավարի լիազորությունները պաշտպանության կազմակերպման բնագավառում	**Հակոբյան Տիգրան** մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ
7	Համայնքի ղեկավարի լիազորությունները արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառներում	**Խանդանյան Գագիկ** մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ
8	Համայնքի ղեկավարի լիազորությունները քաղաքաշինության բնագավառում	**Հարությունյան Հակոբ** մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ
9	Համայնքի ղեկավարի լիազորությունները կոմունալ տնտեսության բնագավառում	**Բիձյան Հակոբջան** մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ **Խանդանյան Գագիկ** մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ
10	Համայնքի ղեկավարի լիազորությունները հողօգտագործման բնագավառում	**Ղուրշուդյան Մարատ** մարզպետի աշխատակազմի հողաշինարարության բաժնի պետ
11	Համայնքի ղեկավարի լիազորությունները տրանսպորտի բնագավառում՝	**Խաչատրյան Գևորգ** մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ
12	Համայնքի ղեկավարի լիազորությունները առևտրի և ծառայությունների բնագավառներում	**Հարությունյան Ալեքսան** մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող

13	Համայնքի ղեկավարի լիազորությունները կրթության բնագավառում	**Սաֆարյան Համբարձում** մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
14	Համայնքի ղեկավարի լիազորությունները մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում	**Զարվադարյան Գեղամ** մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
15	Համայնքի ղեկավարի լիազորությունները առողջապահության բնագավառում	**Առաքելյան Արմեն** մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ
16	Համայնքի ղեկավարի լիազորությունները սոցիալական պաշտպանության բնագավառում	**Բաղոյան Արմեն** մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ **Գալոյան Մամիկոն** մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ
17	Համայնքի ղեկավարի լիազորությունները գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառում	**Ջրաղացպանյան Անդրանիկ** մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
18	Համայնքի ղեկավարի լիազորությունները շրջակա միջավայրի պահպանության բնագավառում	**Զանգեզուրյան Դավիթ** մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049